ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.12.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/263

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ դատական դեպարտամենտ
Մասնակից՝ «Գռեգգռեստոն» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացուցիչ՝ Ա. Եղիազարյանի
«Գռեգգռեստոն» ՍՊԸ-ի տնօրեն՝ Ռ. Ասատրյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» գնանշման հարցման ընթացակարգ, շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 16.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16994-2020 գրությամբ «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 09.11.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7662 գրության հիման վրա, 16.11.2020թ.-ին «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 17.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/263 համարի ծածկագիրը:

04.12.2020թ.-ին, 10.12.2020թ.-ին և 18.12.2020թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 10.12.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 18.12.2020թ.-ին:

2. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ դատական դեպարտամենտը 09.11.2020թ. թիվ ԴԴ-3-Ե-7662 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, ներկայացրել «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

Պատվիրատուն ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 10.12.2020թ.-ին հրավիրված նիստին:

Պատվիրատուն 10.12.2020թ.-ին ներկայացրած թիվ ԴԴ-3-8378 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

««Գոեգգոեստոն» ՍՊ ընկերության տնօրենի կողմից ներկայացված դիմումի կապակցությամբ տեղեկացվում է, որ Դատական դեպարտամենտի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գոեգգոեստոն» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Կապալառու) ընկերության միջև 2020 թվականի հուլիսի 21-ին կնքված՝ պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման թիվ ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01 պայմանագիրն (այսուհետ՝ Պայմանագիր) ուժի մեջ մտնելու օրվանից Պայմանագրին կից ծա վա լա թեր թ-նախա հաշվով հաստատված աշխատանքների իրականացման համար առկա են եղել բոլոր անհրաժեշտ պայմանները և Կապալառուն սկսել է վերոհիշյալ ծավալաթերթ-նախահաշվով հաստատված աշխատանքների կատարումը: Այդ մասին է փաստում նաև Պատվիրատուի կողմից ընդունված թիվ 1, թիվ 2 և թիվ 3 կատարողական ակտերը: Սակայն, Կապալառուի կողմից Պայմանագրով հաստատված աշխատանքները կատարվել են անկանոն գրաֆիկով և դանդաղ տեմպերով, ինչի արդյունքում աշխատանքների կատարման առաջին իսկ օրերից ղրանց ժամանակին ավարտը դարձել է ակնհայտ անհնար: Այդ է վկայում նաև այն, որ Պատվիրատուն ընդառաջել է Կապալառուի խնդրանքին և փոխադարձ համաձայնությամբ Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է ևս 30 օրով: Ինչ վերաբերում է Կապալառուի այն պնդմանը, որ որոշ աշխատասենյակներ եղել են փակ և Պատվիրատուն իր անվտանգության աշխատակիցներին հրահանգել է արգելել Կապալառուի աշխատակիցներին՝ մուտք գործել այնտեղ, ապա այն ակնհայտ անհիմն է, քանի որ, ինչպես վերը նշվեց, Կապալառուն Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսել է համապատասխան աշխատանքների իրականացումը՝ առանց որևէ խոչընդոտի: Ամբողջ շինհրապարակից ընդամենը մեկ աշխատասենյակում են առկա եղել փաստաթղթեր և տեխնիկա: Սակայն եթե համեմատենք տվյալ աշխատասենյակի շինաշխատանքների ծավալները Պայմանագրով հաստատված աշխատանքների ծավալների հետ, ապա այն կազմում է ողջ շինաշխատանքների մոտավորապես 5 տոկոսը: Բացի այդ, շինհրապարակում հանդիպման ժամանակ, Կապալառուին տեղեկացվել է, որ մեր կողմից երկու օրվա ընթացքում կազատվի նաև տվյալ աշխատասենյակը, որից հետո Կապալառուի աշխատակիցներն այլևս չեն ներկայացել շինհրապարակ, իսկ Կապալառու ընկերության տնօրենը չի պատասխանել մեր հեռախոսազանգերին: Չկարողանալով կապ հաստատել Կապալառուի հետ և հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքներն ավելի քան մեկ շաբաթ դադարեցված են եղել՝ 28.09.2020 թվականին թիվ ԴԴ-3-Ե-6768 գրությամբ դիմել ենք Կապալառու ընկերության տնօրենին և առաջարկել մեկօրյա ժամկետում վերսկսել շինարարական աշխատանքները: Սակայն որևէ պատասխան չենք ստացել: Այնուհետև, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.2-րդ կետը՝ Պատվիրատուն 13.10.2020 թվականին Կապալառուին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-7125

գրությամբ սահմանել է նոր ողջամիտ ժամկետ՝ սույն ծանուցումն ստանալուց հետո 7 օրացուցային օր, աշխատանքների ողջ ծավալով կատարման համար: Կրկին ոչ մի արձագանք չի ստացվել Կապալառուի կողմից:

Իսկ ինչ վերաբերում է շինարարական աշխատանքների ծավալների համադրումներին, ապա Կապալառուի կողմից առաջարկված ծավալների փոփոխությունները՝ համադրման եղանակով, Պատվիրատուի կողմից ընդունվել են մասնակի, քանի որ Կապալառուի կողմից չեն ներկայացվել համապատասխան հիմնավորումներ: Իսկ Պատվիրատուի կողմից առաջարկվող փոփոխությունները Կապալառուի կողմից ընդունվել են առանց որևէ առարկության, սակայն ամբողջությամբ չեն իրականացվել: Ավելին, Կապալառուի կողմից ավարտին չեն հասցվել հետևյալ աշխատանքները.

1. սանհանգույցների վերանորոգման աշխատանքները, մասնավորապես՝ դռների փոխարինման, սալիկապատման,

2. Աշխատասենյակների մանրահատակների հարթեցման և լաքապատման աշխատանքները,

3. Առաջին հարկում դատական կարգադրիչների ծառայության համար նախատեսված անցակետի կառուցումը:

Ընդ որում, ողջ շինարարական աղբը գտնվում է դատարանի վարչական շենքում և հարակից տարածքում, որը խոչընդոտ է հանդիսանում դատարանի աշխատակիցների, ինչպես նաև այցելուների տեղաշարժի համար, և Կապալառու կողմից մինչ օրս չի իրականացվել որևէ գործողություն նշված շինարարական աղբի տեղափոխման համար:

Կից ներկայացվում է շինհրապարակի առկա վիճակի վերաբերյալ 10 հատ լուսանկար:»:

3. <u>«Գռեգգռեստոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 17.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16994-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, 23.11.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև «21» հուլիս 2020թ կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ պայմանագրի շրջանակներում ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն պարտավորված էր իրականացնել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Մեր կոմից աշխատանքների իրականացումը սկսվել է պատշաճ ժամանակին և համաձայն պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշվի, սակայն աշխատանքների իրականացման ընթացքում առաջացել են որոշակի խոչնդոտներ, մասնավորապես՝

- *փաստացի չափագրման արդյունքում պարզվել էր, որ տվյալ աշխատանքների իրականացման փաստացի ծավալները էականորեն տարբերվում են պայմանագրին կից ներկայացված ծավալաթերթ-նախահաշվում տրված ծավալներից.*
- *տարածքը ազատված չի եղել գույքից, ինչպես նշված է պայմանագրի 3.2.3 կետում, ինչի հետևանքով անհնարին է եղել աշխատանքները իրականացնել առանց գույքը վնասելու:*

Այդ մասին մի շարք անգամներ տեղեկացրել ենք պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ թե գրավոր և թե բանավոր կերպով: Աշխատանքային տարածքը տրամադրվել է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին պարբերաբար, համապատասխան պահանջից հետո: Վերջին տարածքը տրամադրվել է «03» հոկտեմբեր 2020թ.-ին, սակայն այն չէր համապատասխանում ծավալաթերթով հաստատված տարածքին, ինչը իր հերթին որոշակի խնդիրների է հանգեցրել, ինչպիսիք են՝

- *մեկ աշխատանքային սենյակը (այսուհետ՝ սենյակ 1) փոխարինվել է մյուսով (այսուհետ՝ սենյակ 2), որում աշխատանքների բնույթը էապես տարբերվում է սենյակ 1-ի աշխատանքների բնույթից,*
- *սենյակ 1-ում պատի շար աշխատանքներ իրականացնելու նպատակով մեր կողմից գնվել և պահեստավորվել է /դատական դեպարտամենտի տարածքում/ թեթև բետոնե բլոկեր, սենյակ 2-ում այս աշխատանքները նախատեսված չեն եղել,*
- *տաբերվել են աշխատանքների ընդհանուր ծավալները:*

Բացի դրանից, ս.թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ-ում հայտարարված ռազմական դրության հետևանքով «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն ունեցել է աշխատանքային ռեսուրսի քանակական նվազում (աշխատակիցների մեծ մասը կամավորագրվել կամ զորակոչվել է):

Հաշվի առնելով որ աշխատանքների հետաձգումը կապված է աշխատանքային տարածքի ժամանակին չտրամադրման, ռազմական և արտակարգ դրության հայտարարման պատճառով աշխատուժի անբավարարության հետ, ինչպես նաև այն փաստը, որ պայմանագրի միակողմանի լուծման ընթացակարգը հայտարարվել է պայմանագրի 7-րդ կետին համաձայն Անհաղթարելի ուժի ազդեցության /Ֆորս-մաժոր/ ժամանակ խնդրում եմ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի նկատմամբ որևէ պատժամիջոց չկիրառել և թույլ տալ պայմանագիրը ավարտել մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 30-ը:

Կից ուղարկում եմ Ձեզ մեր կողմից դատական դեպարտամենտին ուղղված գրությունների սկանավորված տարբերակները:»:

Մասնակիցը 07.12.2020թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշման լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Դատական դեպարտամենտի և «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի միջև «21» հուլիս 2020թ կնքված N «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ պայմանագրի շրջանակներում ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն պարտավորված էր իրականացնել ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական շենքի ընթացիկ նորոգման աշխատանքներ: Մեր կոմից աշխատանքների իրականացումը սկսվել է պատշաճ ժամանակին և համաձայն պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշվի, սակայն աշխատանքների իրականացման ընթացքում առաջացել են որոշակի խոչնդոտներ, մասնավորպես՝

Համաձայն պայմանագրի 3.2.3 կետի Պատվիրատուն պարտավոր է պայմանագիրը ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք: Սակայն տարածքը ազատված չի եղել գույքից, ինչի հետևանքով անհնարին է եղել աշխատանքները իրականացնել առանց գույքը վնասելու: Որոշ վերանորոգման ենթակա աշխատասենյակներ եղել են փակ և Պատվիրատուն իր անվատանգության աշխատակիցներին հրահանգել է արգելել «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի աշխատակիցներին մուտք գործել այնտեղ աշխատանքներ իրականացնելու նպատակով: Այդ մասին մի շարք անգամներ տեղեկացրել ենք պատվիրատուի համապատասխան ստորաբաժանման ղեկավարին՝ թե գրավոր և թե բանավոր կերպով: Աշխատանքային տարածքը տրամադրվել է «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ին անկանոն, ուշացումներով, մի շարք անգամներ գրավոր և բանավոր պահանջներ ներկայացնելուց հետո: «28» սեպտեմբեր 2020թ.-ին Պատվիրատուի կողմից ծանուցվել ենք որ շինհրապարակները ազատ են, սակայն մեր կողմից աշխատանքներ չեն իրականացվում: Սակայն տեղում պարզվել էր, որ գույքի մի մասը ինչպես նաև փաստաթղթերը և տեխնիկան

հեռացված չի տարածքից (կից ներկայացնում եմ «30» սեպտեմբեր 2020թ.-ի դրությամբ տարածքի լուսանկարներ): Բացի դրանից, տրված տարածքի վերանորոգման աշխատանքները չէին համապատասխանում պայմանագրին կից ծավալաթերթ-նախահաշվով հաստատված աշխատանքներին: Նախատեսված աշխատանքային սենյակը (այսուհետ սենյակ 1) փոխարինվել է այլ տարածքով (այսուհետ սենյակ 2), որում աշխատանքների բնույթը և ծավալները էապես տարբերվում էր: Ցանկանում եմ տեղեկացնել Ձեզ, որ նախատեսված աշխատասենյակի վերանորոգման համար անհրաժեշտ որոշակի շինարարական ապրանքներ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից արդեն գնված և պահեստավորված են եղել դատական դեպարտամենտի տարածքում, սակայն տրամադրված տարածքում այդ աշխատանքները նախատեսված չէին եղել: Աշխատանքների ծավալների և բնույթի փոփոխությունը հաստատելու նպատակով մեր կողմից առաջարկվել է կատարել համադրում, որից հետո կարողանանք շարունակել աշխատանքները նոր հատատված ծավալաթերթի հիման վրա: Այդ առաջարկը մերժվել է պատվիրատուի կողմից, պարզաբանելով, որ համադրումը կկատարեն աշխատանքների կատարումից հետո, որը կոպիտ օրենքի խախտում է և անհնարին է դարձնում աշխատանքների իրականացումը:

Քանի որ առ այսօր «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն չի ստացել գրավոր թե բանավոր որևէ ծանուցում աշխատանքային տարածքը ամողջովին ազատելու մասին, ինչպես նաև աշխատանքների համադրման հաստատված ակտը, ապա «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ի կողմից աշխատանքները չեն վերսկսվել:»:

Հաշվի առնելով թվարկված հանգամանքները՝ «ԳՌԵԳԳՌԵՍՏՈՆ» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում և որևէ պատժամիջոց չկիրառել կազմակերպության նկատմամբ:

4. <u>ՍՑ-LO-2020/263 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ դատական դեպարտամենտի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ի միջև 21.07.2020թ.-ին կնքվել է թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման

ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օր:

iii. Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

iv. ՀՀ դատական դեպարտամենտի և «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ի միջև 03.09.2020թ.-ին կնքվել է թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Համաձայնագրի 1.1 կետի համաձայն՝ Պայմանագրի 1.3 կետում նշված «45 օրացուցային օրը» բառերերը փոխարինել «75 օրացուցային օրը» բառերով:

vi. Պատվիրատուի կողմից 28.09.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-6768 գրությամբ հայտնվել է, որ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ավելի քան մեկ շաբաթ է դադարեցված է Մասնակցի կողմից: Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ շինհրապարակներն ազատ են, սակայն Մասնակցի կողմից որևէ աշխատանք չի կատարվում (հեռախոսազանգերն անպատասխան են մնում): Առաջարկել է մեկօրյա ժամկետում վերսկսել շինարարական աշխատանքները՝ Պայմանագրով նախատեսված կարգով, այլապես Դատական դեպարտամենտը հարկադրված կլինի կիրառել պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

vii. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 02.11.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ԴԴ-1-Ե-7555 ծանուցման համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի և «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ի միջև 21.07.2020թ.-ին կնքված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնման պայմանագրի օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Կապալառուն (Մասնակիցը) պետք է կատարեր շենքերի, շինությունների (ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքի) ընթացիկ նորոգման աշխատանքներ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից (22.07.2020թ.) 45 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 04.09.2020թ.:

Կապալառուի 21.08.2020թ. գրավոր առաջարկության հիման վրա, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով, համաձայն կողմերի միջև 03.09.2020թ. կնքված Համաձայնագիր N 1-ի՝

պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար վերջնաժամկետ սահմանելով սույն թվականի հոկտեմբերի 4-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարել պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները, 2020 թվականի հոկտեմբերի 13-ին Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի՝ Կապալառուին ուղղված թիվ ԴԴ-Յ-Ե-7125 գրությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարման համար սահմանվել է նոր ժամկետ (7 օրացուցային օր)՝ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.2-րդ կետը: Վերը նշված գրությունը նույն օրը՝ 13.10.2020թ-ին, ուղարկվել է Կապալառուի էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև փոստային առաքման ծառայության միջոցով ուղարկվել է Կապալառուի հասցեով: Բացի այդ, գրության բովանդակության մասին բջջային հավելվածի միջոցով ծանուցվել է նաև Կապալառու կազմակերպության տնօրենը: Սակայն, մինչ օրս, Կապալառուի կողմից չի կատարվել որևէ գործողություն, որն ուղղված կլիներ Պայմանագրով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարմանը:

Մինչ օրս Կապալառուի կողմից չկատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 3 723 667.46 (երեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսունյոթ դրամ, քառասունվեց լումա) ՀՀ դրամ:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով սահմանված է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից խախտվել են Պայմանագրի 3.4.1 և 3.4.5 կետերով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջով՝ ՀՀ դատական դեպարտամենտը միակողմանի մասնակի Պայմանագրի չկատարված՝ 3 723 667.46 (երեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսունյոթ դրամ, քառասունվեց լումա) ՀՀ դրամի մասով, լուծում է Պայմանագիրը և ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցները:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված

փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16994-2020 գրությամբ «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա

դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված շենքերի, շինությունների ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օր: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր

հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի և «Գռեզգռեստոն» ՍՊԸ-ի միջև 21.07.2020թ.-ին կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով պետական գնման Պայմանագրի 1.3 կետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից 45 օրացուցային օր:

ՀՀ դատական դեպարտամենտի և «Գռեզգռեստոն» ՍՊԸ-ի միջև 03.09.2020թ.-ին կնքված թիվ «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով պետական գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ 1 համաձայնագրի 1.1 կետով Պայմանագրի 1.3 կետում նշված «45 օրացուցային օրը» բառերերը փոխարինվել են «75 օրացուցային օրը» բառերով:

Պատվիրատուի կողմից 28.09.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ ԴԴ-3-Ե-6768 գրությամբ հայտնվել է, որ Պայմանագրով նախատեսված շինարարական աշխատանքներն ավելի քան մեկ շաբաթ է դադարեցված է Մասնակցի կողմից: Նույն գրությամբ Պատվիրատուն տեղեկացրել է նաև, որ շինհրապարակներն ազատ են, սակայն Մասնակցի կողմից որևէ աշխատանք չի կատարվում (հեռախոսազանգերն անպատասխան են մնում): Առաջարկել է մեկօրյա ժամկետում վերսկսել շինարարական աշխատանքները՝ Պայմանագրով նախատեսված կարգով, այլապես Դատական դեպարտամենտը հարկադրված կլինի կիրառել պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 02.11.2020թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ ԴԴ-1-Ե-7555 ծանուցման համաձայն՝ ՀՀ դատական դեպարտամենտի և «Գռեզգռեստոն» ՍՊԸ-ի միջև 21.07.2020թ.-ին կնքված «ԴԴ-ԳՀԱՇՁԲ-20/01» ծածկագրով գնման պայմանագրի օրացուցային գրաֆիկի համաձայն՝ Կապալառուն (Մասնակիցը) պետք է կատարեր շենքերի, շինությունների (ՀՀ վճռաբեկ դատարանի վարչական շենքի) ընթացիկ նորոգման աշխատանքներ պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրվանից (22.07.2020թ.) 45 օրացուցային օրվա ընթացքում՝ մինչև 04.09.2020թ.:

Կապալառուի 21.08.2020թ. գրավոր առաջարկության հիման վրա, պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետը երկարաձգվել է 30 օրացուցային օրով համաձայն կողմերի միջև 03.09.2020թ. կնքված Համաձայնագիր N 1-ի՝ պայմանագրով

նախատեսված աշխատանքների կատարման համար վերջնաժամկետ սահմանելով սույն թվականի հոկտեմբերի 4-ը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն պայմանագրով սահմանված ժամկետում ամբողջությամբ չի կատարել պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքները, 2020 թվականի հոկտեմբերի 13-ին Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի՝ Կապալառուին ուղղված թիվ ԴԴ-Յ-Ե-7125 գրությամբ Պայմանագրով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարման համար սահմանվել է նոր ժամկետ (7 օրացուցային օր)՛ հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.2-րդ կետը: Վերը նշված գրությունը նույն օրը՝ 13.10.2020թ-ին, ուղարկվել է Կապալառուի էլեկտրոնային փոստի հասցեին, ինչպես նաև փոստային առաքման ծառայության միջոցով ուղարկվել է Կապալառուի հասցեով: Բացի այդ, գրության բովանդակության մասին բջջային հավելվածի միջոցով ծանուցվել է նաև Կապալառու կազմակերպության տնօրենը: Սակայն, մինչ օրս, Կապալառուի կողմից չի կատարվել որևէ գործողություն, որն ուղղված կլիներ Պայմանագրով նախատեսված աշխատանքների ողջ ծավալով կատարմանը:

Մինչ օրս Կապալառուի կողմից չկատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ կազմում է 3 723 667.46 (երեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսունյոթ դրամ, քառասունվեց լումա) ՀՀ դրամ:

Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով սահմանված է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

Հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Մասնակցի կողմից խախտվել են Պայմանագրի 3.4.1 և 3.4.5 կետերով սահմանված պարտավորությունները, և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի պահանջով՝ ՀՀ դատական դեպարտամենտը միակողմանի մասնակի Պայմանագրի չկատարված՝ 3 723 667.46 (երեք միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար վեց հարյուր վաթսունյոթ դրամ, քառասունվեց լումա) ՀՀ դրամի մասով, լուծում է Պայմանագիրը և ձեռնարկում է Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներից բխող միջոցները:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, «Գռեզգռեստոն» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, միակողմանի 30.10.2020թ.-ին լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային

կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 02.11.2020թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում Բողոքներ քննող անձին ներկայացրած այն փաստարկներին, որ Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարումը դարձել է անհնարին՝ 27.09.2020թ.-ին հայտարարված ռազմական դրության հետևանքով և որ Մասնակիցն ունեցել է աշխատանքային ռեսուրսի քանակական նվազում (աշխատակիցների մեծ մասը կամավորագրվել կամ զորակոչվել է), ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը պատասխանատվություն է կրում, եթե չապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի**, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների **հետևանքով**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

ՀՀ վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած որոշմամբ արդեն իսկ անդրադարձել է վկայակոչված հոդվածի մեկնաբանությանը: Մասնավորապես, ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ օրենսդիրը որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Նույն հոդվածի 3-րդ կետով նախատեսվել է մեղքի բացակայության պարագայում պարտավորությունը խախտած անձի պատասխանատվությունը, եթե պարտավորությունը բխում է ձեռնարկատիրական գործունեության իրականացումից: Ընդ որում, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելիս պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձը ենթակա չէ պատասխանատվության միայն այն դեպքում, եթե ապացուցի, որ պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի, այսինքն՝ տվյալ պայմաններում արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով: Այդ կանոնը կիրառելի չէ, եթե օրենքով կամ պայմանագրով նախատեսվել է նույնիսկ անհաղթահարելի ուժի առկայության պայմաններում պարտավորությունը չկատարած կամ անպատշաճ կատարած անձի պատասխանատվություն կրելու հանգամանքը *(տե՛ս, «Արդշինինվեստբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Լանդրաս» ՍՊԸ-ի թիվ ԵՔԴ/0595/04/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը):*

Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրը նախատեսել է, որ պարտավորությունը խախտած ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձն ազատվում է դրա համար պատասխանատվությունից, եթե ապացուցում է, որ պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով: Անհաղթահարելի ուժի կիրառումը պետք է պայմանավորված լինի այնպիսի հանգամանքների զուգորդմամբ, որոնք անհնարին են դարձնում կողմերի ստանձնած պարտավորությունների կատարումը, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով:

Միևնույն ժամանակ, ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձին անհաղթահարելի ուժի հիմքով պատասխանատվությունից ազատելը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, պայմանավորված է արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է: Ընդ որում, ի հայտ եկած հանգամանքի արտակարգ և անկանխելի լինելը յուրաքանչյուր դեպքում պետք է դիտարկել ու գնահատել կոնկրետ պարտավորության բնույթի և դրա կատարման պայմանների շրջանակներում *(տե՛ս, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի ընդդեմ «Վլադ Հակոբյանի անվան «Համակցված կերերի գործարան» ՓԲԸ-ի թիվ ԵԷԴ/0888/02/14 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.11.2015 թվականի որոշումը):*

Պայմանագրի 6 կետի համաձայն՝ սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել

ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումը իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետներում աշխատանքների կատարումը եղել է հնարավոր, քանի որ Մասնակիցը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պետք է կատարեր մինչև 04.09.2020թ.-ը, իսկ արդեն կնքված Համաձայնագրի հիման վրա՝ մինչև 04.10.2020թ.-ը, ուստի այդ պարտավորությունների չկատարումը չի կարող պայմանավորված լինել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պայմանագրի 8.6 կետով սահմանված աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգման պայմանը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչպես այն սահմանված է՝ աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ

չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Ինչպես նաև Մասնակիցը զրկված չէր և կարող էր մինչև Պայմանագրի լուծման մասին ծանուցումը www.gnumner.am կայքում հրապարակվելը՝ 02.11.2020թ.-ը, կատարել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, որը չի կատարել:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված մյուս փաստարկներին, որոնք վերաբերում են աշխատանքների իրականացման փաստացի ծավալներին, տարածքի ազատված չլինելուն, մեկ աշխատանքային սենյակը մեկ այլով փոխարինվելուն և այլն, ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ դրանց վերաբերյալ Մասնակցի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեցին համապատասխան վերաբերելի ու թույլատրելի ապացույցներ, որոնց ուսումասիրության արդյունքում հնարավոր կլիներ փաստել՝ Մասնակցի կողմից իր ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման մեղքի բացակայությունը և այն որ սահմանված աշխատանքները հնարավոր չի եղել կատարել ժամկետում Պատվիրատուի դրևորած գործողությունների կամ անգործության հետևանքով:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները

չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 16.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16994-2020 գրությամբ «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք

չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/263 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Գռեգգռեստոն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**